




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

375 ~~X132~~

Судебн. 1324

Վ. ԳԱԼՖԱՅԱՆ

ԱՐՓԻԿԻ ՅԵՐԱԶԸ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОСЛОВЕДЕНИЯ
Академии Наук
С. СР

891.995

7-23

ՎԱՆ

1926

~~№132~~

~~С 21342~~

Վ. ԴԱԼՅԱՅԱՆ

291-990

9-23

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

30 MAY 2011

Судебн. № 384
50/107

ԱՐՓԻԿԻ ՅԵՐԱԶԸ

(ՊԱՏԿԵՐ)

ՅԵՐԵՎԱՆ

1926.

13.03.2013

7751

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ.
ՄԱՐԲՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 1908.
ՏԻՐԱԺ 500



3495-82

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

Այսպիսի դեպքի, ինչպիսին տալիս է հեղինակը
այս պատկերով, ընթերցողը, ի հարկի, ել չի հանդի-
պել մեր մեջ:

Այսօր, յերբ մեր յերկիրը ապաքինում է ամեն մի
ժամ, իր շատ վերքերի հետ այս վերջին խոցն էլ է
բուժել:

Հեղինակը այս պատկերը վաղուց է դիտել, սա-
կայն իր սուղ վաստակը չի հերել ժամանակին լույս
ընծայել:

«Սուժանի» խոշոր տոկոսը մեր իշխանության
յեռանդուն ջանքերով այժմ ուսանում է Յերևանի հա-
մարյա բոլոր դպրոցներում, կազմելով մեր սաների մեջ
ամենից ընտիր մասը:

Իրրի դատախարակ՝ հեղինակը շատերի հետ ջերջ
կապ ունի, այնքան՝ վոր ուրիշ անգամ իրենց անցյալի
մասին բոլորովին համր այդ մեծ փոքրերը խոստովա-
նել են իրենց ամբողջ վրդիասականը:

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՐՓԻԿԻ ՅԵՐԱԶԸ

Աշունը գալիս էր...

Հագից հոգևորը, լուսեղեն խոսքերին ձյուն
ան բարձերին, անկողին էր պառկել արևը հիվանդ:

Յեղ արևի վերքան իզձեր մեռան պատերի
տակին, փորոնց մանուկ են ասում...

Լույսի ինչպիսի շիթեր թափեց աշնան դե-
ղին շունչը, փորոնցով թե էր կապել արևի ա-
մեն մի տենչ, գույների գանգուր՝ զագաթները
ամեն մի քունք...

Քանի աշունը դեռ չէր քաղել ծառերի կանաչ փետուրը, փոքրիկ Բենիկը ամենևին չէր կասկածում, թե շուտով աշունը դուրս ե քաշելու իր մեջքից լուսն այն շապիկը, վոր արևը հյուսում ե բոլոր վորբերի համար...

Այսօր Բենիկը շատ կանուխ ե փախել վորբանոցից: Դեռ քաղաքը բոլորովին չէր քաշել ուսերից իր սև դույնի վերմակը ե վոչ ել արևը թափել դեռ կանաչ ճյուղերի սառցե բոժոժը...

Բենիկը իր համար չե այդքան վաղ դուրս յեկել աղբի կույտերում քշուջի... Բենիկին հալում ե իր քրոջ Արփիկի քաղցը... Իրեն ինչ:

Ինքը «մեծ» ե... Բայց Արփիկը, Նա դեռ շատ փոքր ե:

Ինչ են տալիս «այնտեղ»: Որե՞նը մի ափսե վոսպի ջուր: Ե՛հ, Արփիկը հազիվ թե տղբի...

Յեվ Բենիկի կակաչի պույտերի տես թուխ աչքերում շողաց մի գույգ լուսն կաթիլ...

Արփիկին ուտելիք ե պետք, թեկուզ սոխի կեղեվ, թեկուզ դեղձի մի կորիկ...

Շուտով նա կվազի «Դարմեքը»: Քար հոչի մարդու սիրտը: Գուցե այգու տերն ել Արփիկի պես հիվանդ ծաղիկ ունի... Թե չե...

Ու Բենիկը սոսկումով հիշեց այն օրը, յերբ իր «քնած» մորը շատերի հետ սայլով թափեցին մի փոս մեջ ու վերից ել հող դիզեցին...

Բենիկը սարսափից խենթ, արշավեց դեպի «Դարմեքը»...

— Բենիկ, Բենիկ, հանկարծ հակառակ մայթից կանչեց մի փոքրիկ... Բենիկը պահ մի Նայեց «ծանոթի» դեմքին...

— Դու ո՞վ ես վոր...

— Գուրգենը: Ձեռն ճանաչում...

— Վայ, ինչքան ես փոխվել... Ետ ինչ ես ուտում վոր:

— Ինչ պատահի... Համա դու շատ ես դեղնել: Քեզ շորից ճանաչեցի: Ով գիտի, գիշեր ցերեկ վոսպի ջուր եք խրպրշտում...

— Ե՛հ...

— Ինչի մինչև ետոր չես փախել...

— Փողոցը լավ ա, վոր...

— Ինչ տեսմ...

— Ետ ո՞ւր իր պոչից ցից վազում...

— «Դարմեքը», Արփիկիս համար... Ու Բենիկի ներքին շուրթը խաղաց...

— Ինչ ա պատահել վոր...

— Փորն ուռել ա... Են օրը թաքուն փախել եր արածելու...

— Փիս կանաչ ա կերել...

— Հալըթ... Տեսնես՝ ըսկի չես ճանաչի...
Ես ինչ ա ձեռքիդ...

— Ա՛ղիք... Շան բերնից եմ պոկել... Ես
որ իմ դոնադն ես... Զեռաց կտապակենք...

Յեվ Գուրգենը «հյուրին» առաջնորդեց Ռու-
սաց տաճարի հարավային մուտքը: Բենիկը հենց
վոր կոխեց սանդուխքի վերջին աստիճանը, հան-
կարժ շեմքից դուրս ցատկեց մի ճերմակ քոթոթ,
վոր հազիվ պահելով իր մարմինը և իր «արհես-
տին» վոչ այնքան հմուտ՝ սկսեց «հաշել»...

— Սուս, Բորիկ, մեր Բենիկն է...

Բորիկը պոչը կախ, կարծես ամաչելով,
դիմեց իր անկյունը:

— Ի՛նչ սիրուն ա: Շատ վախտ ա, վոր
պահում ես...

— Կլի մի շաբաթ: Մեր «խաժանի» ձեռքից
եմ խլել: Քարը վզին ուզում ին Զանգուն քցել:

— Վոր ձեռք տամ չի կծի...

— Հիմի չես: Քեզ ճանաչեց:

Վորքերը իրար դեմ վսիս չունեն: Շուտով
Բորիկը հասկացավ, վոր իրենց հյուրը նույնքան
բարի չէ, վորքան իր տերը:

— Ինչքան չաղ ա: Մեջին կասես արձիճ
ա, առայ Բենիկը այս անգամ վատահ գրվելով
Բորիկին: Դեպքից սպուտ քաղելով՝ Բորիկը մի-
անգամ լիզեց Բենիկի ճակատը:

— Ամեն ոք միս եմ տալի...

— Միս...

— Ենդուր, վոր տուն ա պահում: Մինչև
իմ գալը տանից մի վտտ չի փոխի... Դու Բորի-
կի հետ խաղա, մինչև ոջախ վառեմ:

Քառորդ ժամ հետո Բորիկը այնքան ընտե-
լացավ Բենիկին, վոր հաճախ պառկում էր մեջ-
քի և ձկան ասեղների պես իր սուր առամե-
քով զգում նրա վարտիկի ծոպերը...

Գուրգենը սկսեց ոջախ շինել, այսինքն ի-
րարից կես թիզ հեռու դարսեց մի գույգ ա-
ղյուս, կողերին կոնսերվի մի անոթ ու
տակին ել կրակ վառեց: Հետո «միսը» բաժա-
նեց մի քանի մասի և իր արհեստին ավելի
վատահ, քան թե շահի արքունք կուլինարը, ըս-
կըսեց սպասել «կաթսայի» եփին... Հենց վոր
պայթեց առաջին բշտիկը, Գուրգենը «միսը» թա-
փեց «կաթսայի» մեջ...

— Մեր ճաշին հաց ել ա պետք, առայ նա,
դու մինչև ես չփով «կերակուրը» խառնի...

— Հաց ես հավաքում...

— Ես այսամին քեզ ով հաց կտա...

Յեվ իրոք, այսպիսի տարին աղքատին ով
հաց կը բաշխեր, յերբ մարդկանց մի նախիր ա-
մեն ոք արածում էր քաղաքի դաշտերում, յերբ
մարդկանց յերեսինը կաշի չեր, այլ արևից կուչ

յեկած սեխի դեղին կճեպ... յերբ մարդկանց
մարմինը բսավեր չուներ, քայլը՝ աղմուկ...

Ծիշտ եր ասում Գուրգենը, «ես այամին»
ո՞վ ազքատին հաց կը պարզեր...

— Ե՛ս ել հացը, սկյուռի պես վեր վազելով
դոչեց Գուրգենը:

— Վճռանդից բերիր, հարցրեց Բենիկը զար-
մանքից ապուշ:

— Ծանկեցի...

— Բա միլիցեն...

— Կարա՞ խոսք ասի: «Խուժանը» ձեռաց
մագերին «կարմիր հինա» կը դնի...

Մի ջանել աղջիկ եր գնում, լիմոնի պես դե-
ղին, հացը ձեռքին կախ: Մի կտոր ուղեցի, չը
տվեց: «Կորի, լակոտ, դու կարող ես ձեռք ել
մեկնել»... եղ խոսքը ինձ դադեց: Ի՞նչ ենքան
պահեցի, մինչև հասավ փողոցի քունջը... «Վոր
եղպես ա, դես տուր ետ հացը», ասեցի ու,
սլուկ, ժամի հայաթը: Կեսը «խուժանին» տվի:
Մի խոսքով:

— Ես մեկը Արփիկին, — ասաց Գուրգենը,
խոթելով հացի մեջ մի կտոր աղիք, — Ես ել Բո-
րիկին, Ես ել մեզ...

— Յես հացը Արփիկին տանեմ, Գուրգեն,
ջան...

— Դու գիտես:

— Հիվանդի աչքը իմ ճամփին ա...

— Ինձ լսի: Փախե՞ք եղ դատաբխանից: Ի-
բիդունը յերկուսիդ ել կըսպասեմ:

— Սպասի... ել ճար չունենք...

Արփիկը յեղբոր բերած թոքը փորձեց ծա-
մել: Բայց յերեխի վորկորը այնքան եր կուշ յեկել,
վոր ալիս չեր հոժարում կատարել իր պաշտո-
նը: Հագիվ նա կարողացավ կուլ տալ մի փոքր
միս, բայց վորովհետև ստամոքսը, բացի «բու-
սեղենից» արգեն սովոր չեր ընդունել «ստար»
ուտելիք, ուստի մնունդը նույն ճանապարհով
վեր ուղարկեց նորից ազալու:

Արփիկը հաղիվ պահեց իր շունչը:

— Բէնիկ, հանկարծ Արփիկը գիմեց յեղ-
բորն այնպիսի ձայնով, փորի մեջ կարծես ամ-
փոփեց իր ամբողջ սարսափը:

— Սաթիկին տարան...

— Ո՛ւր, Արփիկ ջան:

— Չեմ գիտում... Են սպիտակ շորով մար-
դը... Փաթաթեց քաթանի մեջ ու տարավ: Ե-
րեզ գիշեր մի սև շուն ել ինձ եր ուզում ուտի...
Քեզ չասի... Հիմի Սաթիկը աղկոր ընկած ա են
«ցուրտ յթախում»... Վախենում եմ... հանկարծ
ասաց յերեխան, սողալով յեղբոր գիրկը...

— Մի վախի, Արփիկ ջան, չեմ թողնի, վոր
սև շունը քեզ ուտի:

— Արի փախչենք...

— Հա...

— Հենց հիմի...

— Հա...

Յեւ Բենիկը քրոջը շալակին, վերին հարկից սկսեց փայտե սանդուղքով իջնել բակը։ Ամբողջ դահլիճը հորի պես մութն էր, վորի մի անկյունում ճրագը ավելի շուտ ծուխ էր տալիս քան լույս, չորս հարյուր հոգեվարք յերեխի պես մի լույս, վոր իզուր ճիգ էր թափում լուծել խավարի աչք վերմակը, վորի տակ առկայծում էր չորս հարյուրի հիվանդ մի շունչ...

Նույնպիսի թշվառ մի լույս դողում էր սանդուղքի ճակատին, վորին մահ էր սպառնում նույնիսկ Բենիկի ամեն մի քայլը։ Բենիկը, վոր ինքնին ողի մի խաղ էր, մի վայրկյան հագիվ ապրող լույսի հոգեվարք։

Բայց ավ էր փակելու փոքրիկ փախստականների դեմը, յերբ վորքերի թիվը հաշիվ չուներ, շենքը նեղ, սնունդը կաղամբի սղտոր ջուր, անկողինը հատակ մաքրելու ձորձեր։

Ում ինչ, թե ամեն գիշեր տիֆը՝ այդ բորենին, խուժում էր նրանց փարախը և զունչը կարմիր խուսափում էր աչք ժամին, յերբ արեւը կարծես նռնեսու մի ծաղիկ՝ թարթում էր իր գույները լուսեղեն շերտերը։

— Ժամի ես կողին իսկի քամի չի գիպչում,—ասաց Գուրգենը հյուրերին ընդունելով իր հարկի տակ։ Եստեղ ել սլաակենք։

— Տակներիս քար, ա Գուրգեն։

— Սպասի, զորթ։—Յեւ Գուրգենը հյուրերի տակ նետեց մի փոքր կարպետ, վոր գիշերով տակին էր, ցերեկը ուտերին։

— Թող Արփենիկն ել մեր մեջ պառկի, վոր տաք ըլի։ Բորիկն ել կողքիս...—Պահեստը հիմի ում ձեռքին ա, հարցրեց Գուրգենը, յերբ բոլորը կուչ լեկան կարպետի տակ։

— Նորից Մարիամի։ Առաջվա պես չաղ ու կարմիր...

— Ենդուր, վոր նա միս էր ուտում, մենք խոտ։

— Վոր ընդնի, ձմերուկի պես կը տոաքի։

— Թե իմանաս վոնց եմ ատում եղ կախարդին։ Ամենքիս միսը լափեց եղ գելը։ Հագին են քանի՞ դաստա չոր ունեն...

— Ամեն մեկի տակ են քանի գուժին ջեր... Մեջներին ալուր, շաքար, չիլ, թե ջուրն ել հացի պես թանդ ըլեր, ջերերին ջուր ել կածեր։ Հիշում ես, Բենիկ, մի սր գլխին ինչ սյին բերինք...

— Փեշը վոր կոխեցիր։

— Յուպկեն դրմփաց գետին... կրուպեն

ու շաքարը խառնեցինք իրար... Սաղ տունը չոքել ու լիզում եր պոլը... Դեռ վարիչին ել ապինք... Նորից պահեցին...

— Ընդուն, վոր երկուսի լակը մի ամանից եք... Ե՛հ,— պատասխանեց Բենիկը այնպիսի յեղանակով, վոր կարծես վո՛չ մի արհավիրք չեր կարող փոխել վորքանոցի կարգերը:

— Մեկ ել են գիշերը, շաքունակեց Գուրգենը, վարիչի հետ ենքան ել լակել, վոր փոխել, ընդել եր գետին... Համա ետ որն ել լավ պատիժ տվինք խայտառակին...

— Վոր ջերից սընդուկի բանալին հանեցի՞ր:

— Են սնդուկ եր, թե պահեստ: Ե՛լ սիպտակ հաց, ել տուփերով կաթ, ել պեսոկ, ել քիչմիշ:— Դիպի դուրս տվինք ու բաշխեցինք վորքերին:— Են ի՞նչ խաբար եր, են վո՞նց են իրար գզում:

— Վերջն ել խո մատնեցին:

— Վորք ին, վորին թակեցին, վորին պաղվալ բցին: Նրանք ել վախից մատնեցին:

— Լավ եր, վոր եդ գիշեր փախա, թեչե կաշիս արկ կը հանին: Հիմի վոր մեկին ձեռք ես մեկնում, քեզ վորքանոց ա նշանց տալի:

— Ե՛հ, ասաց Գուրգենը ու քիչ հետո փակեց իր կոպերը այնպես, ինչպես մի ծաղիկ, վոր արևի խամրումից հետո հավաքվում ե իր լուսե-

ղեն շուրթերը... Ինչպես մի թիթեռ, վոր ծալում ե իր թեվերի կանթեղը... վոր գիշերելու ոթեման ե ընտրում ծաղիկը, թերթիկը վերմակ ե այդպես այնքան ե պաղում, մինչև վոր տըրեր նորից կը հալի նրա թևերի սառցե յերիզը...

Գիշերը ցուրտ եր ու խոնավ:

Կարծես կամարի խորքից մեկը ջուր եր մաղում:

Բայց ինչ փուլթ Գուրգենին, վոր կարպետի տակին նորից հագավ իր լուսե շապիկը...

Ի՞նչ փուլթ, վոր նա վաղը իր Բորիկի պես պտույտ ե գալու այն խանութի շուրջը, ուր միտ են ծախում, մինչև վոր աղբի կողովի մեջ կեղտոտ մի աղիք կը նետեն...

Ի՞նչ փուլթ, վոր նա վաղը ձիու տարթի մեջ գարի յե վորոնելու, պեղելու յե առունների ցեխը:

Լավ ե, թե գյուղացու խուրջինից հավաքալի հացի մի պատառ, թեկուզ ցեխի մի գունդ, թեկուզ ճիլ կաշի... վոչինչ, հացին չի փոխարինի վո՛չ մի կեր:

Բայց ի՞նչ յերջանիկ ե այս գիշեր Արփիկը, կարպետի մեջ, յեղբոր կողքին, այնքան վոր կարծես գլխին չոր քարի տեղ՝ ամպերի բարձունի, տակին նույնպիսի վերմակ, իսկ ինքը լույսի այն ծուփը՝ վոր ճոճում ե աղբյուրի մեջ:

Կարծես ուսին թևեր ունի, այն ել քամուց։
Կարծես մի տեսակ զամբյուղի մեջ ե, հորս կող-
մին ծաղկունք... Այն ել ինչպիսի... Ամեն մե-
կի գեմքին ծիածանի մի Ծալ... Ծաղկունք, վո-
րոնց չի թափել վոչ մի ցուրտ, չի լիզի, վոչ մի
աշուն...

Ո՛յ, կարծես արևի մի ծով ել իր գեմքին
ե։ Ինչքան լավ ե այս զամբյուղը... Արփիկի գեմ-
քին շարունակ արև ե խաղում, արևի հետ ել
մի գույն, վոր իր կողքի ծաղկանց լույսի պես
շարունակ փոխում ե իր կանթեղը։ Արփիկի գեմ-
քը մերթ կակաչ ե, մերթ ձընծաղիկ, մերթ այն
շեղին ծաղիկը, վոր միշտ արևին ե թեքում իր
վիզը, իսկ հետո վիզը կախ, արևի կարոտով հի-
վանդ այնքան ե սպասում, մինչև վոր արևը նո-
րից կը ծաղկի... Մի խոսքով Արփիկի գեմքից հա-
զար գույնի ծաղիկ են քանդակում, հազար գույնի
փունջ, հետո քանդում ու նորից հյուսում։

Իսկ այս ինչ շարքեր են, վորոնք մեծ փո-
շոցով ցած են գալիս այգի...

Ինչ սիրուն ե այն կարմիր ոճիքը, վոր պա-
տում ե բոլորի վիզը...

Ինչ հաստատ ու յեռանդով ե նրանց յեր-
թը։

Բոլորի աչքերին ել արևի այն շիթը, վոր
լեւիսի գեմքին ծաղիկ ե կապում...

Բայց ո՛վ ե այն աղջիկը, վորի յերեսը մի
լույս թիթեռ ե, աչքերը թավիշե ծաղկունք,
քունքերին՝ արևի շիթերից գանգուր, այնքան
թեթև, վոր կարծես հիմի քամուց կը մարեն։

Ո՛վ ե այդ աղջիկը... Ի՜նքը... Արփիկը լավ
ե ճանաչում իր գեմքը, վոր մի անգամ տեսել
ե վանքի ավազանում։

Ինչքան սիրուն ե, ինչ փարթամ... Բոլորը,
բոլորը նայում են Արփիկին։ Շատերը կարոտով,
շատերը զարմանքով, վոմանք ել նախանձով։ Իսկ
ամբոխից մի կին, վոր ճանաչում եր Արփիկին,
ուղակի ասաց. «Ով եր կարծում, թե այս հի-
վանդ վորդից այսպիսի չքեղ թիթեռ ե դուքս
դալու»...

Իսկ ո՛վ ե այս պատանին կամ իր կողքի
զույգը, վորոնցից մեկը կողքին դրոշակ ունի,
իսկ մյուսը առաջին հսկա մի թմբուկ.— Յեվ
ինչ առույգ, ե ինչ պարթև...

Իրար կողքի մի զույգ բարդի, վորոնք փո-
թորկին ել հագիվ են ճոճում իրենց գազաթը։
Նրանց յերկաթե քայլի տակ վորդի պես կուչ ե
դալիս գետինը, սողում ե իր պատյանը...

Այնքան են իրար նման, վոր կարծես միև-
նույն ճյուղի զույգ տերև են, յերկվորյակ ծաղ-
կում։—

Արփիկը կարծես յերկուսին ել հանդիպել ե,
բայց թե յե՛լը, Արփիկը լավ չի հիշում...

— Մենք ենք, Արփիկ, չես ճանաչում, հանկարծ շուռ գալով՝ ասում ե գույգը...

— Բենիկ, Գուրգեն, գոչում ե Արփիկը և ուրախությունից խենթ՝ ուզում ե ցատկել յեղբոր գիրկը...

— Շարքի մեջ ես, Արփիկ, գոչում ե դասակապետը...

Իսկ այս ինչ կին ե, ամբոխի միջին, վոր դեմքին ծանոթ ժպիտ՝ նայում ե Արփիկին... Կարծես դեմքին արև ե ծագկել—այն մեծ կապառ, վոր ամեն ոք շիկնում ե սարի թիկունքին... վոր բոլոր ծաղկումներին կանաչ ավետիք ե բերում...

Բայց են կնոջ դեմքի արևը աչքի լույս չի թափում, այդ կնոջ դեմքից ե կարծես լույս ընդունում ամեն մի աչք, առանց վորի կույր ե ամեն մի ծաղիկ, գույն չունի վոչ մի շիկնում...

Այնքան հարազատ ե այդ յերեսը Արփիկին, այնքան ծանոթ ձախ ծնոտի այն հակինթը, վոր կարծես սառած գույնի մի կաթիլ ե...

Վճռտեղ կամ յերբ ե տեսել այդ լույս ծամերը, վորոնք լիզում են նրա վիզը... Գուցե վանքի բակում, յերբ հազիվ եր թոթովում իր մոր անունը... «Մայրիկ...»

— Յես եմ, Արփիկ...

Թե ինչպես Արփիկը ցատկեց մոր գիրկը և աշխտեղ ել պայթեց՝ Արփիկը ել չի հիշում:

Արփիկը հիմի ծագկի մի շունչ ե, հոգմի թեվ, արևի մի կայծ, վոր սառցե շիթերից հազար գույնի աստղունք ե թափում:

Արփիկը բոլորովին չի ափսոսում, վոր հանգավ մոր գրկին:

Չե՞ վոր բոլոր վորբերի դայակը արևն ե, չե՞ վոր բոլոր վորբերին արևը իր թևերի տակ ե հավաքում: Ե՛լ անձրևը ցուրտ չի մաղիլ Արփիկի մեջքին, ել սառնամանիքը չի լիզի Արփիկի մերկ ուսերը:

— Թող Արփիկը հալա պառկի, մինչև վոր հոգի թաքի տակին մի հոտ քաշենք,—ասաց Գուրգենը յերբ Բենիկը ուզեց շարժել Արփիկի ուսը:

— Ղորթ ա, վոր զարթնի, հաց կուզի, յեվ ամբողջ կարպետը քաշելով քրոջ ուսին՝ վազեց Գուրգենի հետևից: Գուրգենը արաբի նոսրի պես վիզը թեք՝ արշավում եր դեպի դանթար:

Այստեղ խուժանը ավարի մեծ հուսով գործի յեր կանչել բոլոր ուժերին:

«Բանակի» մի թևը արդեն դիրք եր գրավել մի ինչ վոր պահեստի դիմաց, վորից «հետախույզ» վաշտի կարծիքով քաղաքի փուռը ցորեն եր ստանալու, փակ աջը՝ վորպես «ստանդակ» մի

3495-82

խումբ՝ զրոհ եր տալու այն պահին, յերբ վորեւէ
փորձանք վտանգեր կենտրոնը:

Կասկած փարատելու համար խուժանը մայ-
թերին „դամ“ եր խաղում: Յեւ ճիշտ այն պա-
հին, յերբ մի քանի տեղ փոքրիկ վոտոխները,
վոտերիմ աքաղաղների պես թեվերը կախ՝ սպառ-
նում էին պոկել իրարու կատար, հանկարծ ցո-
րենի առաջին սայլը, կարծես բեռը մեջքին մի
խխունջ, սկսեց իջնել դեպի քաղաք:

Թիկունքից մեկը սուլեց:

Գուրգենը, ինչպես առյուծի կորյուն՝ ցատ-
կեց դեպի սայլը, ձեռքի գանակով այնպես ճեղ-
քեց պարկերից մինը, վոր ցորենը սկսեց հեղե-
ղի պես վիժել:

Սայլի առաջնորդը փորձեց վորսալ փոքրիկ
ավազակին, բայց հանկարծ մի սուր քար նրա
ձախ այտին ծիրանի ժապավեն կտպեց:

Առաջին զարկին հետևեց մի ամբողջ տա-
րափ: Խուժանը ավարը փեշին՝ սկսեց նահանջել
դեպի „կոնդ“:

Ապառաժի ծերպերին ու վ կարող է քամի
վորսալ:

Բենիկը ուսին թեվեր՝ վազում եր գավիթ,
փեշին կարծես մի բուռը մարգարիտ:

Բիշ է, Արփիկը սովից դոնե յերեք ու ապա-
հով է: Վոչինչ, թե Արփիկը բորիկ է, հազին քաթա-

հե կարճ շապիկ: Վոչինչ, թե յերեսի փորը կար-
ծես տիկ է, յերեսին վոտիս ու կաշի, այնքան
բարակ, վոր պամիդորի կեղեվի պես կարող
ես պոկել: Վոչինչ, քաղցը հացից ավելի ուրիշ
դեղ չունի: Ինքը շուտով աղանձ կպատրաստի:
Ով գիտի Գուրգենը ցախը ձեռին իրեն է սպա-
սում:

Բենիկը սկյուռի մի քանի թռիչքով արդեն
քրոջ կողքին է:

Արփիկը նորից պառկած եր ձախ կողքի, յերե-
սով դեպի յեղբայրը:

Բենիկը մի անգամ շարժեց քրոջ ուսը,
մյուս անգամ ավելի թափով:

Բայց Արփիկը պաղ եր, ձիգ ու սուս, ինչ-
պես այն մեծ տիկնիկը, վոր մի անգամ Բենիկը
տեսել եր մի տան աղակու հետև:

Բենիկի մեջքին մի ցուրա խաղաց:

Արփիկը սովից մարել է:


Բիշ է, բիշ է պետք:

Ու Բենիկը սարսափից կույր՝ սուրաց դե-
պի քաղաքի մեծ փողոցը

— Տեսնես ինչ մարդու տուն ա քանդել ես
պատիկ ավազակը, ասաց սարդե փորով մի մարդ,
վոր դուրս գալով խանութից՝ սկսեց հետևել Բե-
նիկին:

Աշունը գալիս եր...

Մի համը հոգեվարք եր դա, վոր թափում
եր ծաղկանց լույսը, լիզում գազաթների ծիա-
ծանը: Վոր գազաթներէ հարսանիքը սուզի յե
փոխում, հյուրերի զուգսը մի սև պատանի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0399158

7751

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

ИНСТИТУТ
ВОСТОЧНОЕВРОПЕЙСКИХ
И Азиатских Исследований
Академии Наук
СССР

ՊԱՏՐԱՍԵՆ՝

1. Սալոմե (դրամա)
2. Մեր ընտանիքը (վեպ)